ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

30 սեպտեմբերի 2021 թվականի N 1623 - Լ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 16-Ի N 1202-Լ ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածները՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ո ր ո շ ու մ է.

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2020 թվականի հուլիսի 16-ի «Կապիտալի շուկայի զարգացման ծրագիրը հաստատելու մասին» N 1202-Լ որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունը և լրացումը՝

1) որոշման նախաբանում «2-րդ մասը, Հայաստանի Հանրապետության կառավարության 2019 թվականի փետրվարի 8-ի N 65-Ա որոշման 5.3-րդ և 5.6-րդ կետերը» բառերը փոխարինել «4-րդ մասը» բառերով.

2) որոշման 1-ին կետով հաստատված հավելվածի «Մաս II. Կապիտալի շուկայի զարգացման ռազմավարական ուղղություններն ու կապիտալի շուկայի զարգացման գործողությունների ծրագիրը» աղյուսակի 1-ին բաժնի 1-ին գլուխը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 1.1.6-րդ կետով.

«

1.1.6. Ուսումնասիրել սփյուռքի պարտատոմսերի նկատմամբ պահանջարկը. ուսումնասիրության արդյունքներով ներկայացնել սփյուռքի պարտատոմսերի տեղաբաշխման նպատակով ֆինանսական գործիքի մշակման և կիրառման վերաբերյալ առաջարկություն:	Սփյուռքի պարտատոմսերի պահանջարկի վերաբերյալ հետազոտություն և, ըստ անհրաժեշտության, պարտատոմսերի տեղաբաշխմանն ուղղված ֆինանսական գործիքի մշակման և կիրառման վերաբերյալ առաջարկի ներկայացում:	ՀՀ ֆինանսների նախարարություն ՀՀ էկոնոմիկայի նախարարություն ՀՀ կենտրոնական բանկ (համաձայնությամբ) ՀՀ վարչապետի աշխատակազմի սփյուռքի գործերի գլխավոր հանձնակատարի գրասենյակ	2022 թ. մարտի 31

»:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ Ն. ՓԱՇԻՆՅԱՆ

Երևան

01.10.2021
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ